

Հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 6-ի առաջարկություն

Հանրային նշանակության կազմակերպությունների աուդիտն իրականացնող՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների որակի արտաքին ապահովման մասին (ծանուցված՝ թիվ C(2008) 1721 փաստաթղթի համաձայն)

Պաշտոնական տեղեկագիր L 120, 07/05/2008թ. էջ 0020 - 0024

Հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 6-ի առաջարկություն

Հանրային նշանակության կազմակերպությունների աուդիտն իրականացնող՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների որակի արտաքին ապահովման մասին

(ծանուցված՝ թիվ C(2008) 1721 փաստաթղթի համաձայն)

(2008/362/ԵՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 211-րդ հոդվածը,

Քանի որ

1) պարտադիր աուդիտի որակի արտաքին ապահովումը հիմնարար նշանակություն ունի աուդիտի բարձր որակի ապահովման համար: Այն բարձրացնում է հրապարակված ֆինանսական տեղեկությունների արժանահավատությունը և ապահովում բաժնետերերի, ներդրողների, վարկատուների և այլ շահագրգիռ անձանց ավելի բարձր պաշտպանությունը: Ուստի, որակի արտաքին ապահովման ցանկացած համակարգ պետք է լինի օբյեկտիվ և աուդիտորական մասնագիտությունից անկախ,

2) «Տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի մասին» Խորհրդի 78/660/ԵՏՀ և 83/349/ԵՏՀ հրահանգները փոփոխող և Խորհրդի 84/253/ԵՏՀ հրահանգը [1] ուժը կորցրած ճանաչող Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006/43/ԵՀ հրահանգի 29-րդ և 43-րդ հոդվածներով սահմանվում են բարձր չափորոշիչներ պարտադիր աուդիտ իրականացնող բոլոր անձանց և աուդիտորական կազմակերպությունների որակի ապահովման համակարգերի համար: Դրանում ներառված են «Եվրոպական միությունում պարտադիր աուդիտի որակի ապահովման մասին. նվազագույն պահանջների մասին» Հանձնաժողովի 2000 թվականի նոյեմբերի 15-ի 2001/256/ԵՀ առաջարկության [2] որոշ գաղափարները,

3) այդուհանդերձ, այդ Առաջարկության՝ հանրային նշանակության կազմակերպությունների պարտադիր աուդիտին վերաբերող մասերը պայմանավորված են վերջին միջազգային զարգացումներով և միտումներով՝ ուղղված նման աուդիտների որակի արտաքին ապահովման համակարգեր ներմուծելուն, որոնք կառավարվում են են աուդիտորական մասնագիտությունից անկախ և որտեղ որակի ապահովման ստուգումները չեն իրականացվում պրակտիկ գործունեությամբ զբաղվող աուդիտորների կողմից,

4) 2006/43/ԵՀ հրահանգով սահմանված չափորոշիչները դեռևս հնարավորություն են տալիս անդամ պետություններում՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների որակի արտաքին ապահովման համակարգերի կազմակերպման ձևի զգալի տարբերությունների: Պետք է խուսափել անդամ պետություններում շահագրգիռ անձանց կողմից պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների իրականացրած աուդիտի որակը, մասնավորապես, 2006/43/ԵՀ հրահանգի 34-րդ հոդվածի առումով, տարբեր կերպ ընկալելուց: 2006/43/ԵՀ հրահանգը խրախուսում է նաև անդամ պետությունների հասարակական վերահսկողության համակարգերին գտնել որակի ապահովման ստուգումների համաձայնեցված մոտեցում,

5) անդամ պետությունների միջև համագործակցությունը առաջնահերթ է հանրային նշանակության կազմակերպությունների աուդիտի իրականացման առումով: Հավելյալ ցուցումներ պետք է տրվեն նման կազմակերպությունների աուդիտն իրականացնող պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների որակի ապահովման համակարգերի համար: Ուստի, նպատակահարմար է ներկայացնել նոր առաջարկություն, որն ավելի է համապատասխանում առկա իրավիճակին, քան 2001/256/ԵՀ առաջարկությունը, և որում հաշվի են առնվում միջազգային նոր միտումները, ինչպես նաև անդամ պետությունների հատուկ կարիքները: Այդուհանդերձ, կարիք չկա մանրամասն ցուցումներ տրամադրել հանրային նշանակության կազմակերպություններից բացի, այլ կազմակերպությունների աուդիտն իրականացնող պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների որակի ապահովման համակարգերի վերաբերյալ,

6) տեսչական ստուգումները պետք է նպաստեն ստուգվող պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության կողմից իրականացվող աուդիտի որակի բարձրացմանը և լինեն կանոնավոր ու կանխարգելիչ բնույթի: Դրանք պետք է ուղղված լինեն պարտադիր աուդիտի և, հետևաբար, որպես վերջնական նպատակ՝ ֆինանսական շուկաների նկատմամբ վստահության ձևավորմանը և պահպանմանը: Ուստի, սույն Առաջարկությունը չպետք է վերաբերի օրենքների և կանոնակարգերի հնարավոր խախտումներից բխող՝ կոնկրետ դեպքի առնչությամբ իրականացվող քննություններին,

7) Համայնքներում աուդիտի որակը բարձրացնելու համար անկախ վերահսկողության մարմինները պետք է ավելի ակտիվ դեր ունենան աուդիտորական կազմակերպությունների տեսչական ստուգումներում: Ցուցումներ պետք է տրամադրվեն տեսչական ստուգման համակարգի անկախության համար: Ինչ վերաբերում է տեսչական ստուգումների անցկացմանը, ապա պետք է պարզաբանվի հասարակական վերահսկողության մարմինների, մասնագիտական միավորումների և համապատասխան այլ մարմինների հնարավոր դերը, ինչպես նաև փորձագետների դերը: Անհրաժեշտ են նաև պարզաբանումներ որակի ապահովման համակարգի ֆինանսավորման վերաբերյալ,

8) 2006/43/ԵՀ հրահանգի 43-րդ հոդվածով պահանջվում է, որ հանրային նշանակության կազմակերպությունների պարտադիր աուդիտն իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների որակի ապահովման ստուգումներն իրականացվեն առնվազն երեք տարին մեկ անգամ: Հասարակական վերահսկողության համակարգը կարող է հանդիպել դժվարությունների բավարար թվով տեսուչներ ներգրավելու հարցում՝ յուրաքանչյուր տեսչական ստուգման ընթացքում տեղում ստուգումներ անցկացնելու համար: Ուստի, հնարավոր է, որ այն փորձագետները, ովքեր տեսուչներ չեն, որոշակի պայմաններում մասնակցեն տեղում ստուգումներին,

9) ապահովելու համար, որ տվյալ պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը հետևի տեսչական ստուգման մասին վերջնական հաշվետվությանը, և որ այդ հաշվետվությունը նրանց բավարար ցուցումներ տրամադրի հաշվետվությունում ներկայացված խնդիրներից հետագայում խուսափելու համար, տեսուչների և տվյալ պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպության միջև արդյունավետ հաղորդակցություն պետք է տեղի ունենա թե՛ վերջնական հաշվետվությունն ընդունելուց առաջ, թե՛ դրան հաջորդող փուլում,

10) որակի ապահովման համակարգի հաշվետվողականությունը և Համայնքի ներսում համեմատելիությունը բարձրացնելու համար տեսչական ստուգումների ընդհանուր արդյունքների մասին տարեկան զեկույցը պետք է ներառի առանցքային տվյալներ կատարողականի մասին, որը հնարավորություն կտա գնահատել թե՛ օգտագործված ռեսուրսները, թե՛ որակի ապահովման համակարգի տնտեսական և նպատակային արդյունավետությունը,

11) հաշվի առնելով միջազգային նոր զարգացումները, մասնավորապես, համապատասխան մարմինների և փորձագետների ներգրավումը տեսչական ստուգումների անցկացմանը՝ Հանձնաժողովը մտադիր է գնահատել իրավիճակը 2011 թվականին,

ՍՈՒՅՆՈՎ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է.

Առարկան

1. Սույն Առաջարկությունը նախատեսում է ցուցումներ հանրային նշանակության կազմակերպությունների աուդիտն իրականացնող՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների որակի ապահովման անկախ համակարգերի՝ 2006/43/ԵՀ հրահանգի 29-րդ և 43-րդ հոդվածների համաձայն կիրարկման համար:

2. Եթե անդամ պետությունը 2006/43/ԵՀ հրահանգի 39-րդ հոդվածի համաձայն որոշում է հանրային նշանակության որոշ կազմակերպությունների նկատմամբ չկիրառել համապատասխան պահանջները, ապա այդ անդամ պետությունը պետք է հանրային նշանակության այդ կազմակերպությունների նկատմամբ չկիրառի նաև սույն Առաջարկության համաձայն ընդունված միջոցները:

Սահմանումները

3. 2006/43/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածում տրված սահմանումները կիրառվում են սույն Առաջարկության նկատմամբ: Սույն Առաջարկության նպատակներով՝ կիրառվում են նաև հետևյալ սահմանումները՝

ա) «հասարակական վերահսկողության մարմին» նշանակում է 2006/43/ԵՀ հրահանգի 2(10) հոդվածի իմաստով իրավասու մարմին, որը ներկայացնում է այդ Հրահանգի 32-րդ հոդվածով սահմանված սկզբունքների վրա հիմնված հասարակական վերահսկողության որևէ համակարգ.

բ) «տեսուչ» նշանակում է 2006/43/ԵՀ հրահանգի 29(1) հոդվածի առաջին ենթապարբերության (դ) կետով սահմանված պահանջները բավարարող ստուգող, որն ընդունվել է աշխատանքի հասարակական վերահսկողության մարմնի կամ

համապատասխան մեկ այլ մարմնի կողմից, որին պատվիրակվել է տեսչական ստուգումների անցկացումը.

զ) «տեսչական ստուգումներ» նշանակում է պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների՝ տեսուչի կողմից ղեկավարվող որակի ապահովման ստուգումներ, որոնք չեն համարվում 2006/43/ԵՇ հրահանգի 32(5) հոդվածի իմաստով քննություն.

դ) «փորձագետ» նշանակում է ֆիզիկական անձ, որը հատուկ փորձառություն ունի ֆինանսական շուկաների, ֆինանսական հաշվետվությունների, աուդիտի կամ տեսչական ստուգումների հետ կապված այլ ոլորտներում, այդ թվում՝ պրակտիկ գործունեությամբ զբաղվող՝ պարտադիր աուդիտ իրականացնող աուդիտորներ:

Որակի ապահովման համակարգի անկախությունը

4. Հասարակական վերահսկողության մարմինը պետք է ստանձնի հանրային նշանակության կազմակերպությունների աուդիտն իրականացնող՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների որակի արտաքին ապահովման համակարգի համար ամբողջ պատասխանատվությունը: Անդամ պետությունները որպես հասարակական վերահսկողության մարմին չպետք է նշանակեն հաշվապահության կամ աուդիտորական մասնագիտության հետ կապ ունեցող որևէ միավորման կամ մարմնի:

5. Հանրային նշանակության կազմակերպությունների աուդիտն իրականացնող՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձինք և աուդիտորական կազմակերպությունները պետք է ենթարկվեն տեսչական ստուգումների, որոնք հասարակական վերահսկողության մարմինն անցկացնում է ինքնուրույն կամ մեկ այլ համապատասխան մարմնի հետ՝ 6-րդ կետի համաձայն:

6. Հնարավոր է, որ տեսչական ստուգումների անցկացման հետ կապված աշխատանքների կատարումը պատվիրակվի մեկ այլ համապատասխան մարմնի՝ պայմանով, որ ապահովվի նման մարմնի հաշվետվողականությունը հասարակական վերահսկողության մարմնին, և որ վերջինս պահպանի առնվազն հետևյալ իրավասությունները.

ա) տեսչական ստուգումների մեթոդաբանության, այդ թվում՝ տեսչական ստուգումների և հետագա վերահսկողության ձեռնարկների, հաշվետվություններ ներկայացնելու մեթոդաբանության ու տեսչական ստուգումների պարբերական ծրագրերի հաստատումը և, եթե հասարակական վերահսկողության մարմինը նպատակահարմար է գտնում, փոփոխումը,

բ) տեսչական ստուգումների վերաբերյալ հաշվետվությունների և հետագա հաշվետվությունների հաստատումը և, եթե հասարակական վերահսկողության մարմինը նպատակահարմար է գտնում, փոփոխումը,

գ) յուրաքանչյուր տեսչական ստուգման համար տեսուչների հաստատումը և, եթե հասարակական վերահսկողության մարմինը նպատակահարմար է գտնում, նշանակումը,

դ) ցանկացած տեսակի առաջարկությունների և ցուցումների ներկայացումը այն մարմնին, ում պատվիրակվել է տվյալ աշխատանքների կատարումը:

7. Հասարակական վերահսկողության մարմինն իրավունք ունի մասնակցել տեսչական ստուգումներին և մուտք ունենալ տեսչական ստուգման նյութերին, աուդիտի աշխատանքային փաստաթղթերին և այլ համապատասխան փաստաթղթերին:

8. Որակի ապահովման համակարգի ֆինանսավորման բոլոր կարգավորումները, այդ թվում՝ ֆինանսավորման մակարդակի և ֆինանսական հսկողության վերաբերյալ, չպետք է ենթակա լինեն հաշվապահության, աուդիտի մասնագիտության կամ որևէ աուդիտորական կազմակերպության ներկայացուցիչ հանդիսացող կամ դրանց հետ այլ կերպ կապ ունեցող անձանց հաստատմանը կամ վետոյին: Ֆինանսավորման մակարդակը հասարակական վերահսկողության մարմինն պետք է հնարավորություն տա ունենալ 6-րդ և 7-րդ կետերն իրականացնելու հարցում իրեն աջակցող անձնակազմ:

9. Եթե որակի ապահովման համակարգի համար միջոցները տրամադրվում են տեսչական ստուգումների ենթակա պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպությունների կողմից, ապա նրանց կողմից վճարման ենթակա ցանկացած վճար կամ այլ մուծում պետք է լինի պարտադիր և ենթակա լինի վճարման ամբողջությամբ և ժամանակին:

Տեսչական ստուգումների անկախությունը

10. Հասարակական վերահսկողության մարմինը պետք է ապահովի, որ նախատեսվեն անձնակազմի, այդ թվում՝ տեսուչների, և տեսչական ստուգման համակարգի կառավարման անկախությանը և օբյեկտիվությանը վերաբերող համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր:

11. Անձին, ով պրակտիկ գործունեությամբ զբաղվող՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձ է կամ աշխատում է կամ այլ կերպ կապ ունի պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության հետ, չպետք է թույլ տրվի հանդես գալ որպես տեսուչ:

12. Անձին չպետք է թույլ տրվի որպես տեսուչ հանդես գալ պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության տեսչական ստուգումներին, եթե առնվազն երկու տարի չի անցել այն պահից, երբ տվյալ անձը դադարել է լինել տվյալ աուդիտորի կամ աուդիտորական կազմակերպության գործընկերը [մասնակիցը] կամ աշխատողը կամ դադարել է այլ կերպ նրանց հետ կապ ունենալ:

13. Տեսուչները պետք է հայտարարեն, որ իրենց և տեսչական ստուգման ենթակա պարտադիր աուդիտ իրականացնող անձի ու աուդիտորական կազմակերպության միջև շահերի բախում չկա: Այն տեսուչները, ովքեր թերի կամ կեղծ հայտարարություններ են անում, չպետք է ներգրավվեն տեսչական ստուգումների իրականացմանը և պետք է ենթարկվեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցների:

14. Տեսչական ստուգումների համար տեսուչները պետք է վարձատրվեն միայն հասարակական վերահսկողության մարմնի կամ այն մարմնի կողմից, ում պատվիրակվել է ստուգումների անցկացումը: Տեսուչները չպետք է որևէ վարձատրություն ստանան ստուգվող պարտադիր աուդիտ իրականացնող անձից, աուդիտորական կազմակերպությունից կամ դրանց ցանցերից:

15. Եթե հասարակական վերահսկողության մարմինը համարում է, որ պատշաճ կերպով տեսչական ստուգումն անցկացնելու համար էական նշանակություն ունի հատուկ փորձառությունը, ապա տեսուչներին պետք է աջակցեն փորձագետներ: Այդ

փորձագետները պետք է գործեն տեսուչի անմիջական հսկողության տակ և ենթարկվեն 10-րդ, 12-14 կետերում նշված պահանջներին:

Մեթոդաբանական ցուցումներ տեսչական ստուգումներ անցկացնելու համար

16. Եթե անդամ պետությունում ժամանակավորապես չկան բավարար թվով տեսուչներ տեղում ստուգումներ անցկացնելու համար, հասարակական վերահսկողության մարմինն պետք է իրավունք ունենա փորձագետներին ներգրավել տեղում ստուգումներին՝ պայմանով, որ այդ փորձագետները բավարարեն 2006/43/ԵՀ հրահանգի 29(1) հոդվածի առաջին ենթապարբերության (դ) կետով սահմանված պահանջները, լիովին հաշվետու լինեն հասարակական վերահսկողության մարմնին և որ նույն պարտադիր աուդիտ իրականացնող անձի մոտ կամ աուդիտորական կազմակերպությունում տեսուչները տեղում ստուգումներ անցկացնեն առնվազն վեց տարին մեկ անգամ:

17. Տեսչական ստուգումները պետք է ներառեն.

ա) աուդիտորական կազմակերպության որակի հսկողության ներքին համակարգի ձևի գնահատումը,

բ) ընթացակարգերի համապատասխանության պատշաճ ստուգումը և հանրային նշանակության կազմակերպությունների աուդիտորական գործերի ստուգումը՝ որակի հսկողության ներքին համակարգի արդյունավետությունը պարզելու համար,

գ) հաշվի առնելով (ա) և (բ) կետերի համաձայն իրականացվող տեսչական ստուգման արդյունքները՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության կողմից 2006/43/ԵՀ հրահանգի 40-րդ հոդվածի համաձայն հրապարակված թափանցիկության վերաբերյալ վերջին տարեկան հաշվետվության բովանդակության գնահատումը:

18. Պետք է ստուգվեն պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության ներքին հսկողության առնվազն հետևյալ քաղաքականությունը և ընթացակարգերը.

ա) պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության համապատասխանությունը աուդիտի և որակի հսկողության կիրառվող ստանդարտներին, էթիկայի ու անկախության պահանջներին, այդ թվում՝ 2006/43/ԵՀ հրահանգի IV գլխին և 42-րդ հոդվածին վերաբերող պահանջներին, ինչպես նաև տվյալ անդամ պետության համապատասխան օրենքներին, կանոնակարգերին և վարչական ակտերին,

բ) օգտագործվող ռեսուրսների քանակը և որակը՝ ներառյալ համապատասխանությունը 2006/43/ԵՀ հրահանգի 13-րդ հոդվածով սահմանված շարունակական կրթության պահանջներին,

գ) համապատասխանությունը գանձվող աուդիտորական վճարների մասին՝ 2006/43/ԵՀ հրահանգի 25-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

19. Համապատասխանությունը ստուգելու նպատակով՝ աուդիտորական գործերի գոնե զգալի մասը պետք է ընտրվի պարտադիր աուդիտի ոչ պատշաճ իրականացման ռիսկի վերլուծության հիման վրա:

Տեսչական ստուգումների արդյունքները

20. Տեսչական ստուգումների արդյունքները և եզրակացությունները, որոնց վրա հիմնված են առաջարկությունները, այդ թվում՝ թափանցիկության վերաբերյալ հաշվետվությանը վերաբերող արդյունքները և եզրակացությունները, պետք է մինչև ստուգման մասին հաշվետվության վերջնական տարբերակը կազմելը պատշաճ կերպով փոխանցվեն ստուգվող պարտադիր աուդիտ իրականացնող անձին կամ աուդիտորական կազմակերպությանը և քննարկվեն նրանց հետ: Մտուգվող պարտադիր աուդիտ իրականացնող անձին կամ աուդիտորական կազմակերպությանը պետք է տրվի տեսչական ստուգման մասին հաշվետվության ներկայացումից հետո տասներկու ամիսը չգերազանցող ժամկետ՝ աուդիտորական կազմակերպության որակի հսկողության ներքին համակարգերի վերաբերյալ առաջարկությունների առնչությամբ գործողություններ ձեռնարկելու համար: Եթե ստուգվող պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը պատշաճ կերպով չի հետևել առաջարկություններին, ապա հասարակական վերահսկողության մարմինը պետք է բացահայտի որակի հսկողության ներքին համակարգերում հայտնաբերված հիմնական թերությունները:

21. Համապատասխան անդամ պետությունում նախատեսված պատշաճ իրավական ընթացակարգի համաձայն՝ հասարակական վերահսկողության մարմինը պետք է իրավունք ունենա կիրառելու կարգապահական բնույթի միջոցներ կամ նշանակելու պատժամիջոցներ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ:

22. Հասարակական վերահսկողության մարմինը պետք է հանրությանը ժամանակին և պատշաճ կերպով առնվազն տեղեկացնի պարտադիր աուդիտի իրականացման հետ կապված՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ կիրառված ցանկացած վերջնական կարգապահական միջոցի կամ նշանակված պատժամիջոցի մասին: Այն պետք է նշի համապատասխան պարտադիր աուդիտ իրականացնող անձին կամ աուդիտորական կազմակերպությանը և նկարագրի նման կարգապահական միջոցների կամ պատժամիջոցների հիմք հանդիսացած հիմնական թերությունները:

23. Այն դեպքերում, երբ տեսչական ստուգման ընթացքում հաստատվում է, որ պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության կողմից 2006/43/ԵՀ հրահանգի 40-րդ հոդվածի համաձայն հրապարակված թափանցիկության վերաբերյալ հաշվետվությունը պարունակում է այնպիսի տեղեկություններ, այդ թվում՝ աուդիտորական կազմակերպության որակի հսկողության ներքին համակարգի արդյունավետության մասին, որոնք հասարակական վերահսկողության մարմինը համարում է զգալիորեն ապակողմնորոշիչ, այն պետք է ապահովի, որ թափանցիկության վերաբերյալ հաշվետվությունը անհապաղ համապատասխան փոփոխությունների ենթարկվի:

Որակի ապահովման համակարգի ընդհանուր արդյունքների թափանցիկությունը

24. Հասարակական վերահսկողության մարմինները պետք է տարեկան զեկույց ներկայացնեն որակի ապահովման համակարգի ընդհանուր արդյունքների մասին: Զեկույցը պետք է ներառի տեղեկություններ ներկայացված առաջարկությունների, առաջարկություններին հետևելու, կիրառված կարգապահական միջոցների և նշանակված պատժամիջոցների մասին: Այն պետք է ներառի նաև քանակական տեղեկություններ և այլ առանցքային տվյալներ կատարողականի մասին՝ ֆինանսական

միջոցների ու անձնակազմի առումով, ինչպես նաև որակի ապահովման համակարգի տնտեսական ու նպատակային արդյունավետության վերաբերյալ:

Հետագա քայլերը

25. Անդամ պետություններին առաջարկվում է մինչև 2009 թվականի մայիսի 6-ը Հանձնաժողովին տեղեկացնել սույն Առաջարկության համաձայն ձեռնարկված գործողությունների մասին:

Հասցեատերերը

26. Սույն Առաջարկությունը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2008 թվականի մայիսի 6-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Հանձնաժողովի անդամ Չարլի ՄաքՔրիվի

[1] ՊՏ L 157, 09.06.2006թ., էջ 87: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008/30/ԵՀ հրահանգով (ՊՏ L 81, 20.03.2008թ., էջ 53) փոփոխված Հրահանգ:

[2] ՊՏ L 91, 31.03.2001թ., էջ 91: